08.05.2025

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մայիսի 8-ին Հայաստանի Հանրապետությունում տոնում ենք Երկրապահի օրը՝ երկիր պահող ու պաշտպանող մարդկանց օրը:

Մեր պետականության կայացման գործում անգնահատելի է երկրապահի դերը:

Մեր երկրի ու ժողովրդի համար բարդ ու ճակատագրական ժամանակաշրջանում հայ ժողովրդի զավակները ստանձնեցին հայրենիքի պաշտպանության գործը՝ դառնալով ազատամարտիկ ու մահապարտ, երկրապահ ու հրամանատար, կանգնելով մեր բանակի ստեղծման ակունքներում:

Հարգարժան երկրապահներ, դուք լավ գիտեք խաղաղության գինը. դուք այն նվաճել էք զենքով ու հավատով, անձնուրաց պայքարով ու կյանքի գնով:

Մեր ժողովրդի համար ճակատագրական ու վճռորոշ բոլոր ժամանակներում երկրապահը կրկին առաջնագծում էր՝ հայրենիքի պաշտպանի ու նվիրյալի իր առաքելությամբ:

Այդ պայքարի ճանապարհին ունեցանք անդառնալի ու թանկ կորուստներ: Մեր խոնարհումը այն հայորդիների հիշատակին, որոնք նահատակվեցին հայ ժողովրդի ապրելու իրավունքը նվաճելու ճանապարհին:

Այսօր էլ՝ երկրապահները կրկին իրենց փորձառությամբ ու հայրենապաշտությամբ սովորեցնում են լինել միաբան ու համախմբված, իրենց անցած ուղով տալիս են հայրենապաշտության դասեր:

Հարգելի երկրապահներ, երկրի հոգս ու խնդիրներով ապրող մարդիկ

Մաղթում եմ բոլորիդ առողջություն, բարեկեցություն, ապահով և արժանապատիվ կյանք, քանի որ ձեր կյանքով ու պայքարով բազմիցս եք ապացուցել, որ երկիրն ուժեղ է և անպարտ հայրենասեր և անձնուրաց տղաների շնորհիվ, որոնք այս երկրի տերն են ու պաշտպանը, երկիրը շենացնողն ու պահողը: Ձեր նահատակված ընկերների, մեր հերոս տղաների կյանքի գնով նվաճված խաղաղությունը բոլորիս պաշտպանության կարիքն ունի:

Այսօր, քան երբևէ, մեր միասնականությամբ և հստակ դիրքորոշմամբ պիտի ամրապնդենք մեր երկրի խաղաղությունն ու կայունությունը, բարօրությունն ու անվտանգ ապագան՝ լինելով կրողն ու փոխանցողը մեզ ժառանգած արժեքների: